ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 սեպտեմբերի 2012 թվականի թիվ 82-Ա

ԻՋԵՎԱՆԻ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՍՊԱՐՏԱԿ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և հիմք ընդունելով Իջևանի թիվ 1 հիմնական դպրոցի 20.07.2012թ կայացած մանկավարժական և ծնողական խորհուրդների որոշումները, ինչպես նաև պատերազմի, աշխատանքի և ներքին գործերի համակարգի վետերանների Իջևանի տարածքային կազմակերպությունների խորհուրդների դիմումը

որոշում եմ

1. Անվանակոչել Իջևանի թիվ 1 հիմնական դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպությունը վաստակավոր ուսուցիչ Սպարտակ Սարգսյանի անունով:
2. Իջևանի թիվ 1 հիմնական դպրոցի տնօրենին՝
   1/ սույն որոշումից բխող դպրոցի կանոնադրության մեջ կատարել համապատասխան փոփոխություն և ներկայացնել հաստատման
   2/ սույն որոշումից բխող փոփոխությունները սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

18 սեպտեմբերի 2012թ.
ք.Իջևան